

բութեանք, բայց վաւերագրերն ունին պատմական նշանակութիւն և անշռուչ արժանի հրատարակութեան:

Անտիպ վաւերագրերի այս հրատարակութիւնը մեզ յիշեցնում է, թէ վերջապէս ժամանակ է, որ Ս. Էջմիածնի միաբանութիւնը ձեռնարկէ իւր Սինօդի և հայրապետական դիւտանի գոնեա կարեոր պատմական վաւերագրերը հետզհետէ լոյս ընծայելու:

Առաջին անգամը չէ, որ Հ. Տարգենը գրական առպարեզն է հանդէս գալիս: Մինչև այժմ նա հրատարակել է Առաքել Գաւրիժեցու պատմագրութեան երրորդ տպագրութիւնը, որ նախորդներից լաւագոյն է: Յետոյ առաջին անգամ նա է լոյս ընծայել Զուղայեցի Խաչատրւ Արեգայի «Պատմութիւն Պարսից», որ ոչ միայն Պարսից նորագոյն շրջանի, այլև և մեր նոր-Զուղայի Հայոց պատմութեան և գլուոցի շրջանի համար անգնահատելի նիւթ է տալիս իբրև ժամանակակից յիշատակարան: Ապա տուել է Ս. Կրիմսկու «Մահմետական աշխարհն ու Նորա Ապագան» պատմական սիրուն և սեզմ գրուածքի յաջողթարգմանութիւնը: իսկ վերջին գրեոյկով գալիս է լրացնելու նախ և առաջ մի գործնական պահանջ, որի առթիւ հրատարակել է և պատմական անտիպ վաւերագրերը:

Ուրախալի է տեսնել, որ երիտասարդ ճեմաբանական վարդապետները իւրեանց պաշտօնական պարագմունքներից դուրս ազատ ժամանակը նուիրում են գրական երկերի և հրատարակութեանց:

#### Ա. Կանայեան.

«Տունկերը ու անոնց հայերէն անունները». Դոկտ. Յովին. Արքինեանի, Փարիզ, 1906թ. տպ. Տողրամաճեան, ան 8, պատկերազարդ: մաքուր տիպ, գինը 1 ֆ. 25 սն:—

Մեզանում զգալի կերպով բացակայումէ մեր երկրի բոյսերի հայ անունների ժողովածուն: Տաճկահայերը պէտք է ասել այդ ճիւղին շատ աւելի յառաջ ու լուրջ ուշադրութիւն են գարձրել: Ալիշանը իւր «Հայրաւստակ»-ով, Քաջբերունին իւր «Բառդրքով» այս գործի հաստատուն սկիզբը դրին ու ապացուցին, որ մեր լեզուն զուրկ չէ բոյսերի հայերէն անուններից, ինչպէս և մեր երկիրը «ճոխ ու բեղուն բուսական արտադրութիւնից, լեռներն ու հովիտնե-

բը գունագեղ ու քաղցրաբոյր ծաղիկների ծածկոցից...  
Գրքոյկիս հեղինակ դոկտ. Յովհան Արթինեան դալիս է  
ճոխացնելու հայ բաւսաբանների սեզմ ընտանիքը, այն  
առաւելութեամբ միայն, որ նա տալսվ ընթերցողին բոյ-  
սի հայերէն անուան համապատասխան և եւրոպական առ-  
նունը—ճգնում է օրոշել ու գտնել բոյսի զուտ հայկական  
անունը, «հայրենական աւանդութեանց ու լեզուին պա-  
հապան մամերու ու տատերու բերնէն քաղելով ճշտել  
այդ տունկերու անունները, տեսակները, յատկութիւն-  
ները» ...

Արթինեանը խոյս է տալիս նաև բոյսերի օտար անուանց բռնազբօսիկ թարգմանութիւններից կամ այն ընդհանուր ձեից, որ յաճախ կդժնէք մեր բառգրքերի մէջ որոշ բոյսի անուան դիմաց գրած՝ «տունկ ինչ», «բոյս ինչ» և կամ Ամերդովլաթին ու իրն Բէյթարին դիմելուց, քանի որ մեզանում առհասարակ բոյսերի, տունկերի և ծառերի հայերէն անունները դիտցողներ հազուագիւտ են։ Այս ուղղութեամբ Արթինեանը ճշտում է շատ սիսալ թարգմանութիւններ։ օր. կոլզա (colza) բոյսի դէմ Քաջունին, Լուսինեան, Տէմիրճիպաշեան դնում են հայերէն կաներակ, այն ինչ Արթինեանը փաստօրէն ապացուցում է, որ կաներակը կոլզան չէ, այլ ֆրանսերէն carthame-նէ, Նոյնպէս ու հայերէն երեքնուկ ու առոյն խոտաբոյսերի անուանց դէմ Ալիշանը (Հայրուսակ) դնում է trèfle, այն ինչ առօյտը lucerne (médicago stiava)-նէ, և այս ստուգաբանական համեմատութիւնը Արթինեանը անում է բոյսերի ոչ լոկ անուամբ, այլ տեսակների, աւելի մանազնին նկարագրութեամբ, նիւթն առնելով ժողովրդի բերնից ու ժողովրդի ծոցից։ Այդպիսով ձեր ականջին հնչումնեն առնեկերի մի շարք հայ ժողովրդական հնչիւն անուններ-կաներակ (Carthamus tinctorius Z.), երեքնուկ (trifolium rubens Z.), կորեզան (Onobrychis sativa Z.), սպանդ (Ruta graveolens Z.), մկնալոն (Crataegus oxyacantha Z.) ամանկոսրուկ (Adonis), պտկումեր (papayer rocas Z.), կովու նակշիկ (Capsella bursa-pastoris Z.), սօխուկ (Allium schoenoprasum Z.).

noprasum Z.), սոսի (Platanus Orientalis Z.), պապկեբլոր (Mnscari Comosum Mill), քանի ծաղիկ, դլինակ (Delphinium cosolida), խիճ (Fragopogon pratensis Z.), բուրու (Faraxacum officinale Z.), կարնուկ (Erophorbia arientalis Z.), սուեղ (falcaria Rivini). Արթինեանը խոստանում է շարունակել իւր այս՝ ժողովրդական աղքերի մի շիթը կազմող աշխատաւթիւնը և դիմումն է անում կարող անհանց օգնել իրեն՝ հաւաքելով բոյսերի ժողովրդական անուններն ու սոցա բուսաբանական, բժշկական և առտնին բացատրութիւնները:

Միանգամայն պէտք է խրախուսել պ. Արթինեանի այս օգտաւէտ ձեռնարկութիւնը:

**Ա. Մ.**

Վահե.—Անջատուածները «Յառաջախ» գրադարան, Թիֆլիզ, 1907, գինն է 10 կոպէկ։ Վերջին ժամանակները Դաշնակցութեան մէջ տեղի ունեցող պառակտումները առիթ է տուել պ. Վահեին իր այդ բրօշիւրով իրու թէ քննադատել այդ պառակտուողներին՝ «անջատուածներին»։ Փոխանակ ընդունելու և ճանաչելու այն պատմական-հասարական փաստը, թէ Դաշնակցութեան մէջ ներկայումս կատարւում է մի դիմերենցիացիա՝ դաշնակցականների «բիւրեղացում», որը հետևանք է նրա յայտնի «հետեօրժէն» բաղադրութեանը, նա՝ պ. Վահեն, շատ միամիտ ենթադրելով իր ընթերցողներին, սկսում է հին դարմանը քամուն տալ։ Նոյն շարլոնային տրամաբանութիւնը, արդէն վաղուց ծամծմուած նոյն առարկութիւնները գալիս են ջրալի կերպով ապացուցանելու Դաշնակցութեան սուցիալիզմը (? !), ներբողելու Դաշնակցութեան յեղափոխական հմայքը։ Ծանօթ ֆրազներ, ծանօթ մտքեր . . . :

**Ա. Խ.**